Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 05 հունիսի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օհանյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Բաղալյանը, Ս. Աբազյանը և Կ. Սարգսյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար «Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման (2-րդ փուլ) աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2026 թվականի մայիսի 26-ին, ժամը 16:00-ին (հրապարակվել է 18.05.2026թ.-ին):

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Մոդուլ» ՍՊԸ	ք. Երևան, Ն. Զարյան 22/3 077 77 26 70	info@modul.am
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ուստան, Թեիլերյան 14 043 600090	gritig@inbox.ru
«ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	ք, Երևան Կենտրոն Մ. Մաշտոցի պող /Շ/ 60 գրասենյակ 6 093 741188	ascontrol.llc@gmail.com
«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	ք. Երևան, Խորենացի 2-րդ փակ. 17բն. 094102058	Texqontrol@mail.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 5 698 750 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Տեխնիկական հսկողության ծառայություններ – «Արազափ-1» պոմպակայանի մղման խողովակաշարի հիմնանորոգման (2-րդ փուլ) աշխատանքներ				
1	«Մոդուլ» ՍՊԸ	900 000	180 000	1 080 000
2	«ԱՍ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	3 500 000	0	3 500 000
3	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	3 900 000	0	3 900 000
4	«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ	4 100 000	0	4 100 000

Մասնակց(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** հայտով չեն ներկայացվել՝ հրավերով պահանջվող «Պիտանելիության չափորոշիչ» որակավորման չափանիշով սահմանված լիցենզիայի ներդիրը՝ բնօրինակից արտատպված, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ իր կողմից հաստատված տեղեկանքը՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի մասին՝ համաձայն Հավելված N 1.3-ի և կից աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորող փաստաթղթերը: «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված նմանատիպ պայմանագրերերի հիմնավորման համար **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի** հայտով ներկայացված պայմանագրի արժեքը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով սահմանված պահանջներին (Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:):

«ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ի հայտով՝ Հավելված N 1.3-ով և կից փաստաթղթերով ներկայացված մասնագետի նվազագույն աշխատանքային ստաժը չի համապատասխանում ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշով սահմանված՝ առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետին ներկայացվող նվազագույն պայմաններին:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Համաձայն ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/5-Տ ծածկագրով հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին և «ՏԵԽ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ-ին՝** մինչև կասեցման ժամկետի ավարտը **(08.06.2026թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

նախագահ	_____	Ա. Օհանյան
անդամներ	_____	Է. Բաղալյան
	_____	Ս. Աբազյան
	_____	Կ. Սարգսյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան